ԳՈԳՀՈՎԻՏ

Վարչական ղեկավար՝ Վարդան Թադևոսյան

Հեռ: 094 23 60 45

Մակերես՝ 10.7 կմ^2

Բնակչություն՝ 373

Ինդեքս՝ 2804

vardan.tadevosyan1@mail.ru

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցքից գտնվում է 11 կմ հարավ, մարզկենտրոնից՝ 24 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Թաքնալի, Թաքնալու, Թեքնելի անվանումները: Գոգհովիտ է վերանվանվել 1978 թ-ին: Գյուղը

տեղադրված է կանաչապատ սարավանդում՝ ծովի մակարդակից 1840մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Ունի սառնորակ աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Ունի ս. Աստվածածին անունով եկեղեցի, որը կառուցվել է հին շենքի տեղում:

1831 թ-ին գյուղն ունեցել է 153, 1922 թ-ին՝ 393, 1970 թ-ին՝ 438, 1979 թ-ին՝ 359 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 366 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 48%, կանայք՝ 52%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. Մինչ աշխատունակներ՝ 30%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 92 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները մեծ մասամբ օգտագործվում են որպես վարելահող 244հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 77 և 553 հեկտար: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Զբաղվում են նաև հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամ և պտղաբուծությամբ: